ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 11 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի «Տրանսֆերային գնագոյացում» մենագրության** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. ներկայացված մենագրությունը նվիրված է ՀՀ-ում և, առհասարակ, համաշխարհային մասշտաբով տնտեսվարման ու հարկային վերահսկողության համար չափազանց արդիական և կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ տրանսֆերային գնագոյացմանը: Մենագրությունում ներկայացվել և վերլուծվել են տրանսֆերային գնագոյացման մեթոդաբանական հիմքերը, պատմական զարգացումը, ներկայիս կարգավորման և վերահսկողության մոտեցումները, հաշվետվողականության հիմնախնդիրները և այլ կիրառական հարցեր: Հատկանշական է, որ ներկայացված մենագրությունը տրանսֆերային գնագոյացմանը նվիրված հայալեզու առաջին համալիր աշխատությունն է, որտեղ հեղինակը նորովի է մեկնաբանել տրանսֆերային գնագոյացման հիմնախնդիրները տարբեր շահառուների տեսանկյունից: Մենագրության արժանիքներից է նաև այն, որ վերլուծվել են տրանսֆերային գնագոյացման դրսևորումները հարկային հարաբերություններում, ինչպես նաև մեկնաբանվել են փոխկապակցված կազմակերպությունների ներխմբային կառավարչական որոշումների կայացման, կառավարչական և ֆինանսական հաշվառման նոր մոտեցումները, տրվել են հեղինակային մեկնաբանություններ և լուծումներ: Մենագրությունը ներկայացված է պատշաճ շարադրանքով և հետաքրքիր կառուցվածքով: Այն ներառում է առաջաբան (հեղինակի կողմից), 3 բաժիններով խմբավորված 6 գլուխ՝ յուրաքանչյուրը 3-ական ենթագլխով, եզրակացություններ, անգլերեն ամփոփագիր և օգտագործված գրականության ցանկ:

Մենագրության վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1) Լ.Հ.Գրիգորյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

2) Ա.Գ.Սաֆարյան՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետ, տնտեսագիտության դոկտոր:

3) Ս.Ռ.Զաքինյան՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

4) Շ.Վարդանյան՝ «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ տրանսֆերային ծառայությունների ղեկավար, Հայ-ռուսական համալսարանի տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված մենագրությունը կատարված է բարձր մակարդակով և ունի գիտամեթոդական ու կիրառական կարևոր նշանակություն: Այն կարող է օգտակար լինել պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, տնտեսագիտության բնագավառի հետազոտողների, ֆինանսական կառավարիչների և վերահսկողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, ֆինանսական հաշվառման ամբիոնի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի և համալսարանի գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի «Տրանսֆերային գնագոյացում» մենագրությունը** երաշխավորել հրատարակության, 150 օրինակ տպաքանակով, հեղինակի միջոցներով: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մայիսի 11
Երևան